
Medi-Cal EPSDT ծրագրով տրամադրվող լրացուցիչ ծառայություններ երեխաների և երիտասարդների համար

Ապրիլ 2018թ., Հրատ. #5526.10 - Armenian

1. Ի՞նչ ծառայություններ կարող եմ ստանալ Medi-Cal-ից¹ EPSDT ծրագրի շրջանակում:

EPSDT նշանակում է Վաղ և պարբերական ստուգում, ախտորոշում և բուժում (անգլ.՝ Early and Periodic Screening, Diagnosis, and Treatment): EPSDT-ն Medi-Cal-ի նպաստ է: Եթե ձեր տարիքը փոքր է 21-ից, և դուք ունեք ամբողջական Medi-Cal,² դուք կստանաք EPSDT նպաստը:³

EPSDT-ի միջոցով դուք ստանում եք առողջության պահպանմանն ուղղված մի շարք նպաստներ:

Պարբերական ստուգումներ—Առաջին՝ EPSDT-ն ասում է, որ Medi-Cal-ը պետք է ապահովի ձեզ համար առողջության պարբերական ստուգումների անցկացումը՝ որոշելու ձեր բժշկական կարիքները: Դա ներառում է լսողության, տեսողության, ատամնաբուժական և հոգեկան առողջության կարիքները բացահայտող ստուգումները: Այն նաև ներառում է թունավոր նյութեր պարունակող ներկերից թունավորումը:

Ախտորոշման և բուժման ծառայություններ—Երկրորդ՝ բուժապասարկման կարիք ունենալու դեպքում EPSDT-ն ասում է, որ Medi-Cal-ը պետք է ձեզ համար ապահովի ախտորոշիչ և բուժման ծառայությունների ստացումը՝ ձեր առողջական վիճակը «շտկելու կամ մեղմելու» համար:

Ցանկացած բուժօգնություն, որի դիմաց կարող է վճարվել Medicaid ծրագրով—EPSDT-ն տրամադրում է բուժօգնության

Ծառայությունների լայն շրջանակ, այդ թվում՝ ծառայություններ, որոնք ընդգրկված չեն 21 տարեկան և ավելի մեծ տարիքի անձանց համար հասանելի սովորական Medi-Cal ծառայությունների ցանկում: Դա այն պատճառով է, որ Կալիֆորնիան կարող է ընտրել սահմանափակել մեծահասակներին առաջարկվող ծառայությունները, սակայն 21 տարեկանից փոքր երեխաների համար նահանգը պետք է առաջարկի ցանկացած ծառայություն, որի համար կկարողանա վճարել Medicaid ծրագիրը, անգամ եթե նահանգն ընտրել է չտրամադրել այդ ծառայությունները մեծահասակներին:

Այդպիսի ծառայությունների օրինակներ են լրացուցիչ ատամնաբուժական, տեսողության, լսողության, անհատական բուժքրոջ (հերթափոխային բուժքույրական) ծառայությունները, որոնք մատուցում է դիպլոմավորված բուժքույրը (RN) կամ լիցենզավորված բուժքույր-դայակը (LVN), հիվանդության հսկողությունը, մանկական ցերեկային բուժինամբը, սննդակարգի գնահատումը և ծառայությունները և հոգեկան առողջության գնահատումն ու ծառայությունները: Հոգեկան առողջության գնահատումն ու ծառայությունները ներառում են վարքագծի թերապևտիկ կարգավորման ծառայությունները (TBS), տանը մատուցվող վարքագծի կանոնավորման ծառայությունները (IHBS) և ինտենսիվ բուժման համակարգումը (ICC). ⁴ :

2. Ի՞նչով է EPSDT-ն տարբերվում Medi-Cal-ից:

EPSDT-ն չի տարբերվում Medi-Cal-ից. այն կազմում է Medi-Cal-ի մասը: Այն պարզապես լրացուցիչ նպաստ է, որը դուք ստանում եք, քանի որ դուք 21 տարեկանից փոքր եք: EPSDT-ն ողջամիտ, ընդհանուր սկզբունքներին համապատասխանող բժշկական անհրաժեշտության ստանդարտ է՝ թույլատրված ծառայություններն ստանալու համար: Դա նշանակում է, որ դուք կարող եք ավելի շատ ստուգումներ անցնել և ստանալ ծառայություններ, որոնք դուք կստանայիք, եթե լինեիք 21 տարեկան կամ ավելի մեծ, եթե ձեր բժիշկը կամ բուժող մասնագետը նշանակեր: Նահանգը պետք է համաձայնի առ այն, որ ծառայությունները ներկայացնում են «բժշկական անհրաժեշտություն»:

3. Ո՞րն է EPSDT-ի բժշկական անհրաժեշտության ստանդարտը:

EPSDT ծրագրով տրամադրվող ծառայությունները համարվում են բժշկական տեսանկյունից անհրաժեշտ, եթե դրանք կարող են ակնկալվել «թերությունները և ֆիզիկական և հոգեկան հիվանդություններն ու խնդիրները շտկելու կամ մեղմելու» համար:⁵

4. Արդյո՞ք ես կստանամ EPSDT, եթե ես ունեմ MAGI Medi-Cal:

Այո, եթե դուք 21 տարեկանից փոքր եք: Մատչելի բուժսպասարկման մասին օրենքը մեծացրել է այն անձանց քանակը, ովքեր կկարողանային համապատասխանել Medi-Cal-ին: Փոփոխված ճշգրտված համախառն եկամուտը (MAGI) այն մեթոդն է, որով որոշվում է ֆինանսական համապատասխանությունն այս ընդլայնված խմբի համար, ինչպես նաև ապահովագրավճարի հարկային արտոնությունները, իսկ ծախսային մասնաբաժինն օգնում է «Covered California»-ի միջոցով:⁶ MAGI Medi-Cal ծրագրում ընդգրկված անձինք ստանում են այն նույն նպաստները, ինչ տրամադրվում է սովորական Medi-Cal ծրագրով:⁷

5. Ի՞նչ է պատահում, եթե ես օգտվում եմ «Կալիֆորնիայի երեխաների սոցիալական ապահովության ծառայություններից» (անգլ.՝ California Children’s Services, CCS)

CCS-ը նահանգային ծրագիր է 21 տարեկանից փոքր որոշակի հաշմանդամություն ունեցող երեխաների համար:⁸ Դուք կարեղ եք ունենալ և՛ CCS, և՛ Medi-Cal: Դուք այնուամենայնիվ ունեք Medi-Cal ծրագրով առաջարկվող EPSDT-ի իրավունք, անգամ եթե օգտվում եք CCS-ից:

6. Ի՞նչ է Medi-Cal-ի կառավարվող բուժսպասարկումը:

Հաշմանդամություն ունեցող շատ մարդիկ այժմ իրենց Medi-Cal-ն ստանում են կառավարվող բուժսպասարկման ծրագրի միջոցով: Medi-Cal-ի կառավարվող բուժսպասարկման ծրագիրը բուժսպասարկողների ցանց է՝ ներառյալ հիվանդանոցները, բժիշկները, թերապևտները և այլն, ովքեր տրամադրում են բուժսպասարկման ծառայություններ իրենց անդամներին: Medi-Cal-ի կառավարվող բուժսպասարկման ծրագրի

դեպքում դուք ընդհանուր առմամբ ունենում եք ծրագրով առաջարկվող բուժսպասարկողների ընտրության սահմանափակում:⁹ Դուք ընտրում եք հիմնական բուժող բժշկին (PCP), ով համակարգում է ձեր բուժսպասարկումը և անհրաժեշտության դեպքում՝ ուղղորդում է ձեզ մասնագետի մոտ: Սա տարբերվում է վճարովի Medi-Cal-ից (երբեմն կոչվում է «ավանդական», «ուղիղ» կամ «սովորական» Medi-Cal), որտեղ դուք կարող եք գնալ ցանկացած բուժսպասարկողի մոտ, ով ընդունում է Medi-Cal-ը:

7. Արդյո՞ք ես կստանամ EPSDT, եթե ես ընդգրկված եմ Medi-Cal-ի կառավարվող բուժսպասարկման ծրագրում:

Այո: Եթե դուք Medi-Cal-ի կառավարվող բուժսպասարկման ծրագրի միջոցով ստանում եք Medi-Cal, դուք այնուամենայնիվ կստանաք EPSDT նպաստները: Դուք ունեք միևնույն իրավունքները, որոնք ունեցել եք վճարովի Medi-Cal-ի դեպքում:

8. Ի՞նչպես է աշխատում EPSDT-ն, երբ ես օգտվում եմ Medi-Cal-ի կառավարվող բուժսպասարկման ծրագրից:

Medi-Cal-ի կառավարվող բուժսպասարկման ծրագրերը պետք է տրամադրեն ձեզ EPSDT նպաստները նահանգային և դաշնային օրենքներին համապատասխան: Ծառայությունը թույլատրելու որոշումը կայացնելիս՝ նրանք պետք է օգտագործեն EPSDT-ի բժշկական անհրաժեշտության ստանդարտը: Medi-Cal-ի կառավարվող բուժսպասարկման ծրագրերը պետք է իրականացնեն հիվանդության բազմակողմանի հսկողություն, համակարգեն բուժինամքը և կրեն առաջնային պատասխանատվություն բժշկական տեսանկյունից անհրաժեշտ բոլոր ծառայությունները տրամադրելու համար, անգամ եթե այդ ծառայություն(ներ)ը կարող են տրամադրվել այլ ծրագրերի, օրինակ՝ դպրոցների, տարածաշրջանային կենտրոնների կամ այլ ծրագրերի կողմից: Երեխաները չպետք է սպառեն այս ծրագրերով տրամադրվող ծառայությունները նախքան Medi-Cal-ի կառավարվող բուժսպասարկման ծրագրերի պատասխանատվության ստանձնումը: Կան ծառայություններ, որոնք «տարանջատվում են» կառավարվող բուժինամքից և որոնց տրամադրումը չի հանդիսանում Medi-Cal-ի կառավարվող բուժսպասարկման ծրագրերի պատասխանատվությունը:

Այդ ծառայությունները ներառում են Denti-Cal ծրագրով վճարվող ատամնաբուժական ծառայությունները և հոգեկան առողջության վերականգնման հատուկ ծառայությունները:¹⁰

9. Ես դժգոհ եմ իմ կառավարվող բուժսպասարկման ծրագրի որոշումից, ի՞նչ կարող եմ անել:

Կարդացե՛ք այն պատճառը, թե ինչու է մերժվել կամ կրճատվել ծառայությունը, և բժշկական անհրաժեշտության որ ստանդարտն է օգտագործել ձեր Medi-Cal-ի կառավարվող բուժսպասարկման ծրագիրը: Եթե ձեր Medi-Cal-ի կառավարվող բուժսպասարկման ծրագիրը մերժման իր պատճառում չի նշել EPSDT-ն, ապա այն հնարավոր է օգտագործում է բժշկական անհրաժեշտության սխալ ստանդարտ: Եթե ձեր Medi-Cal-ի կառավարվող բուժսպասարկման ծրագիրն ասում է «ոչ», քանի որ ծառայությունը չի վճարվում, դա խոսում է այն մասին, որ նրանք հավանաբար հաշվի չեն առել EPSDT ծրագրով առաջարկվող լրացուցիչ նպաստները:

Եթե դուք դժգոհ եք ձեր Medi-Cal-ի կառավարվող բուժսպասարկման ծրագրի որոշումից, կարող եք ներկայացնել բողոք և/կամ բողոքարկել: Բողոքների և բողոքարկումների կանոնները փոփոխվել են՝ սկսած 2017թ. հուլիսի 1-ից: Մանրամասն տեղեկատվության համար տե՛ս. All Plan Letter 17-006-ը հետևյալ հղումով՝

<http://www.dhcs.ca.gov/formsandpubs/Documents/MMCDAPLsandPolicyLetters/APL2017/APL17-006.pdf>. Դուք կարող եք կարդալ նաև այս

թեմայով մեր հրապարակումը հետևյալ հղումով՝

<https://www.disabilityrightsca.org/publications/medi-cal-managed-care-appeals-and-grievances>.

Նշում. Եթե դուք ներառված եք վճարովի Medi-Cal-ում, դուք կարող եք դիմել Medi-Cal-ի անկողմնակալ լսումներ անցկացնելու համար:¹¹ Մենք

ուզում ենք լսել ձեր կարծիքը: Խնդրում ենք պատասխանել մեր հրապարակումների մասին հետևյալ հարցման հարցերին և տեղեկացնել մեզ, թե ինչպես ենք մենք աշխատում:[\[Անցնել հարցումը\]](#)

Իրավաբանական օգնություն ստանալու համար զանգահարել 800-776-5746 հեռախոսահամարով կամ լրացնել [օգնության դիմումի ձևը](#): Մյուս բոլոր հարցերով զանգահարել 916-504-5800 (Չյուսիսային Կալիֆորնիա), 213-213-8000 (Չարավային Կալիֆորնիա) հեռախոսահամարներով:

Կալիֆորնիայում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության կազմակերպությունը ֆինանսավորվում է տարբեր աղբյուրներից, հովանավորների ամբողջական ցանկը տե՛ս այստեղ. <http://www.disabilityrightsca.org/Documents/ListofGrantsAndContracts.html>.

¹ Medicaid-ը Կալիֆորնիայում հայտնի է որպես Medi-Cal - [\(Վերադառնալ հիմնական փաստաթղթին\)](#)

² Ամբողջական Medi-Cal նշանակում է Medi-Cal ծրագրով տրամադրվող բոլոր ծառայությունները: Ամբողջական Medi-Cal-ը չի ներառում նրանց, ովքեր ունեն միայն շտապ օգնության Medi-Cal: – [\(Վերադառնալ հիմնական փաստաթղթին\)](#)

³ 22 CCR § 51340; <http://www.dhcs.ca.gov/services/Pages/EPSTD.aspx> [\(Վերադառնալ հիմնական փաստաթղթին\)](#)

⁴ 42 USC §1396d(r); 22 CCR §§ 51340, 51340.1, 51184; http://www.dhcs.ca.gov/services/MH/Documents/PPQA%20Pages/Katie%20A/Medi-Cal_Manual_Third_Edition.pdf [\(Վերադառնալ հիմնական փաստաթղթին\)](#)

⁵ 42 USC § 1396d(r)(5); 22 CCR §§ 51340 and 51340.1 [\(Վերադառնալ հիմնական փաստաթղթին\)](#)

⁶ «Covered California»-ի մասին տեղեկանալու համար տե՛ս. <https://www.coveredca.com/> <https://www.affordablecarecalifornia.org> [\(Վերադառնալ հիմնական փաստաթղթին\)](#)

⁷ Տե՛ս DRC-ի #555101 հրապարակումը «Ի՞նչ է մեծահասակների տարիքային խմբի ընդլայնումը/MAGI Medi-Cal» հետևյալ հղումով՝

<https://www.disabilityrightsca.org/publications/what-is-adult-expansion-magi-medi-cal>

(Վերադառնալ հիմնական փաստաթղթին)

⁸ Տե՛ս <http://www.dhcs.ca.gov/services/ccs/Pages/default.aspx>

(Վերադառնալ հիմնական փաստաթղթին)

⁹ Medi-Cal-ի կառավարվող բուժսպասարկման վերաբերյալ մանրամասն տեղեկատվության համար տե՛ս DRC-ի # 549501 հրապարակումը հետևյալ հղումով՝ <https://www.disabilityrightsca.org/publications/medi-cal-managed-care-health-plans-what-are-they-what-do-i-need-to-know-about-them> and # 554501: Տե՛ս նաև Medi-Cal-ի կառավարվող բուժսպասարկում. <https://www.disabilityrightsca.org/publications/medi-cal-managed-care-continuity-of-care> Եթե դուք արդեն ներառված եք կառավարվող բուժսպասարկման ծրագրում, և ձեզ անհրաժեշտ է այցելել ցանցում չընդգրկված որևէ բուժսպասարկողի, տե՛ս DRC-ի #555901 հրապարակումը հետևյալ հղումով՝

<https://www.disabilityrightsca.org/publications/medi-cal-managed-care-out-of-network-services>

(Վերադառնալ հիմնական փաստաթղթին)

¹⁰ Տե՛ս All Plan Letter 14-017-ը. Զսանմեկ տարեկանից փոքր Medi-Cal-ի շահառուներին տրամադրվող Վաղ և պարբերական ստուգման, ախտորոշման և բուժման ծառայությունների պահանջները հետևյալ հղումով՝

<http://www.dhcs.ca.gov/formsandpubs/Documents/MMCDAPLsandPolicyLetters/APL2014/APL14-017.pdf> -

(Վերադառնալ հիմնական

փաստաթղթին)

¹¹ Medi-Cal-ի անկողմնակալ լսումներ պահանջելու համար ուսումնասիրեք ձեզ ուղարկված Հայտի ներկայացման ծանուցումը՝ տեղեկանալու, թե ինչպես կարելի է դիմել անկողմնակալ լսումների անցկացման համար, ինչպես նաև անկողմնակալ լսումների համար դիմելու վերջնաժամկետների և կյուրական օգնության վճարման ժամանակավոր կասեցման վերաբերյալ: Անցե՛ք նաև հետևյալ հղումներով՝ <http://www.cdss.ca.gov/Hearing-Requests> և

<http://www.dhcs.ca.gov/services/medi-cal/Pages/Medi-CalFairHearing.aspx>

(Վերադառնալ հիմնական փաստաթղթին)